

PEARLS OF ARMENIAN HERITAGE

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՄԱՍՏԱՍԷՐ ՕԶՆԵՑԻ (ՇՈՒՐՋ 650-729)



Օծնի տաճարը (5րդ դար)

Հայ Եկեղեցւոյ ամէնէն ականառու միաժամանակ անծանօթ կաթողիկոսներէն է Յովհաննէս Օծնեցի հայրապետը: Ծննդեան տարին չենք գիտեր, գուշակելով որ եղած ըլլայ շուրջ 650-ի ատենները. վախճանած է 729-ին եւ թաղուած Արդուի, Օծնի մօտ:

Նախնական ուսումները կատարելէ յետոյ, դիմած է վարդապետներու հմտանալու համար Ս. Գրքի մեկնութեան, իմաստասիրութեան եւ հռետորութեան գիտութիւններուն մէջ. այս վարդապետներէն ինք կը յիշէ Թէոդորոս անուն մէկը, զոր կը նկարագարէ իբրեւ "վարժապետ վեհագոյն, հայր միանգամայն եւ հրահանգող հոգեկան վարժութեանց." ոմանք կը նոյնացնեն

այս Թէոդորոսը Քռթենաւոր կոչուածին հետ:

Կաթողիկոս կ'ընտրուի 718-ին եւ փութով կը գումարէ ժողով մը Դուին մայրաքաղաքին մէջ՝ եկեղեցական բարեկարգութեան համար:

Եկեղեցական կանոններու հաւաքածոյ մը պատրաստել կու տայ, որպէսզի Հայրապետանոցին մէջ առձեռն ունենայ գործնական եւ կիրառելի մատեան մը: Հետաքրքրական է որ նոյն ժամանակներուն բիզանդական եկեղեցւոյ մէջ եւս նման շարժում մը կար, եւ կարելի է կռահել որ արաբական տիրապետութեան սկզբնական տարիներն ըլլալով՝ այս հաւաքածոն հիմնական կարեւորութիւն ունեցած ըլլայ փաստարկելու քրիստոնէական օրինակարգը եւ անոր աստուածային ծագումը արաբական իրաւակարգին մէջ: Հայ եւ ասորի եկեղեցիներուն միջեւ յուզուող խնդիրներուն քննութեան համար (ինչպէս օրինակ Քրիստոսի մարմնին իրականութեան եւ նիւթականութեան մասին) Օծնեցի հայրապետը կը գումարէ Մանազկերտի ժողովը 726ին: Տասնեմէկ տարի հայրապետութիւն կ'ընէ եւ կը մեռնի 729-ին:

Աւանդութեան համաձայն տեսքով փառապանծ էր ու շքեղ կերպով զգեստաւորուած, բայց վարքով ձգնասուն եւ մարմնին վրայ քործ կը հագնէր:

Իմաստասէրին գրական գործերը կրօնական եւ դաւանաբանական բնոյթ ունին: Ոճը կորովի է եւ հզօր ճարտարաբանութեամբ ճոխ, իր գաղափարները վեհ են եւ առատ: Ունի իր անձին եւ մեծութեան գիտակցութիւնը, հիմնելով իր ըսածները եկեղեցւոյ հայրերուն՝ Լուսաւորչի, Աթանասի, Բարսեղի Նազիանզացիի վկայութիւններուն վրայ, ցոյց տալով հայ եկեղեցիին վարդապետութեան միաբանութիւնը ընդհանուր եկեղեցւոյ հետ:

